

Պարսկաստանի (այսինքն Պարսից տակ գըտնուող Հայաստանի) մէջ ժողով մը, լրջօրէն խորհրդակցելու համար իւր բովանդակ ժողովրդեան միութեան մասին»¹⁴ :

Կը գրէ նաեւ Պրոսպէր¹⁵ (8 Մայիս 1630, Հալէպ) առ Ս. Ժողովն թէ «Հայերը Պարսկաստանի մէջ ժողով մը գումարած են, քննութեան առնելու համար Հռովմայ Եկեղեցւոյ հետ միութեան հարցը: Որպէս զի յաջողութեամբ ի գլուխ ելլէ այս խնդիրը, գրուած են Մովսէս կաթողիկոսին միութեան յորդորող թղթեր»¹⁶ :

Ակնարկուած ժողովը, զոր Մովսէս գումարած է էջմիածին, ըլլայ թերեւս այն մասնաժողովը, ուր Մովսէս 12 եպիսկոպոսներու հետ խորհրդակցութեամբ որոշած է «Ով հրաշալի նախահարք» շարականէն ջնջել Լեւոն քահանայապետի հայող տունը. այս առթիւ գրած է թուղթ մը առ Ուրբանոս Ը., որուն ստորագրած են 12 եպիսկոպոսներ: Այս թուղթին պատճենը չունիմ ձեռքիս տակ¹⁷. Կը յի-

¹⁴ Prop. Lettere volgari, an. 1633, vol. 13, f. 107.

¹⁵ Acta S. Congr. 1630—1631, vol. 7, p. 157.

¹⁶ Հակառակ այս համարման, զոր կը վայելէր Մովսէս լատին տաքեալներու եւ Ս. Ժողովին քով, կը շրջէին լուրեր ալ, թէ Մովսէս «Ֆռանկներու» հակառակորդ մըն է եւ անոնց կրթական ձեռնարկութեանց խափանարար: Պրոսպէր կը գրէր Հալէպէն, թէ «Ինքը լսած է թէ Մովսէս վարդապետ, որ այժմ Հայոց կաթողիկոս կը կոչուի, Ֆռանկներու կրօնին դէմ դիրք բռնած ըլլայ — թէեւ ինքը չի հաւատար — ըստ որում թոյլ չի տար, որ Սպահանի Կարմեղեանք Զուլայի մէջ դպրոց բանան»:

¹⁷ Leo Allatius, De ecclesiae occidentalis atque